ՉԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉԿՆԱԲՈՒԾՈՒԹՈՒՆ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Մարդկային հասարակության պատմության ընթացքում մշտապես փոփոխվել ու համալրվել են մարդու զբաղվածության բնագավառները:

Մարդու հնագույն զբաղմունքները են՝ հավաքչությունը, ձկնորսությունը և անտառային տնտեսությունը, որոնք արդեն շուրջ 30 հազար տարվա պատմություն ունեն:

Այսպիսով՝ հավաքչությունը, որսորդությունը, ձկնորսությունը և անտառային տնտեսությունը մարդկությանը մատակարարում են բնությունից վերցրած նյութական բարիքներ, բայց կազմակերպվածության տեսանկյունից նյութական արտադրության ճյուղ չեն:

Չկնորսությունը մարդու տնտեսական գործունեության հնագույն ձևերից է և հայտնի է եղել գրեթե բոլոր ժողովուրդներին:

Ձկնորսությունը տարածված է ամենուրեք՝ բոլոր ծովերում և խոշոր լճերում ու գետերում: Ժամանակակից ձկնորսությունն ու ձկնաբուծությունը դարձել է համաշխարհային տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը:

Ձկնորսությունը բնակչությանը սպիտակուցներով և վիտամիններով հարուստ ձկան միս մատակարարող ճյուղ է:

ՉԿԱՆ ՈՐՍ





Չկնորսության ավանդական գլխավոր շրջաններն են.

- Հյուսիսային Ատլանտիկան էր (երկրներից էլ համապատասխանաբար՝ Նորվեգիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, ԱՄՆ-ը)
- Խաղաղ օվկիանոսի արևելյան՝ Հարավային Ամերիկային հարող շրջանը:

Չկնորսության առաջատար երկրները՝

- Չինաստանը
- Պերուն
- Չիլին

Աքվակուլտուրայի էությունը մարդու կողմից ջրավազաններում արհեստական եղանակով ջրային զանազան օգտակար օրգանիզմների նպատակային բազմացումն է: Պատահական չէ, որ աքվակուլտուրան համարում են «ծովային անասնապահություն»:





«Ծովային անասնապահությունը»

Մարիկուլտուրան, կենսատեխնոլոգիական մի ողջ համալիր է, որն իրենից ներկայացնում է ծովային արժեքավոր կենդանիների և բույսերի արտադրություն և վերամշակում:

ժամանակի ընթացքում ավանդական ձկնորսությանը եկել են փոխարինելու (արդեն մասնակի փոխարինել են) «ծովային անասնապահությունը» և «ծովային բուսաբուծությունը»: Այն երկրները, որոնք մեծապես կախված են ծովից, մշակել և կյանքի են կոչել մարիկուլտուրայի զարգացման հատուկ ծրագրեր: Այսօր արդեն հայտնի է մարիկուլտուրայի շատ բարձր մթերատվությունը:



Անտառի տնտեսական նշանակությունը հատկապես մեծ է փայտանյութի ձեռք բերման գործում: Սակայն մարդու համար դրանցից ոչ պակաս կարևոր է նաև անտառի դերը՝ պտուղների, հատապտուղների, սերմերի, սնկերի հավաքման, վայրի մեղրի, դեղաբույսերի և տեխնիկական բույսերի մթերման, գազանների և թռչունների որսի բնագավառներում:

Անտառների շուրջ 6 հազար բուսատեսակ օգտագործվում է դեղորայքի արտադրության մեջ, ինչպես նաև անտառներից հավաքում են նաև վայրի մեղր:

Որսորդությունը անասնապահության հետ միասին բնակչությանը լրացուցիչ մատակարարում է միս, կաշի, մորթի

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ